



ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ ՅԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵՒՏՍԵԱՆ ԹԵՍԻ

WESTERN PRELACY
OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA
H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: Prelacy@aol.com Website: www.westernprelacy.org



ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ԵՒ ՄԻԱԲԱՆ ՀԱՅՐԵՐԸ ՎԵՐԱԴԱՐՁԱՆ ԱՆՁԻԼԻԱՍԵՆ

Թեմիս բարեխևամ Առաջնորդ Բարձր. Տ. Մուշեղ Արք. Մարտիրոսեան եւ Մեծի Տան Կիլիկիոյ միաբանութեան անդամներէն՝ Թեմիս մեջ ծառայող հոգեւոր հայրերը Լու Անճելըս վերադարձած են Անթիլիասէն, ուր 5-ին 7 Յունիսին, մասնակից եղան միաբանութեան ընդհանուր ժողովին, ապա նաեւ Սրբալոյս Միւռոնի օրինութեան արարողութեան:

Առաջնորդ Սրբազանը այս ուղեւորութեան մասին հարցազրոյցներ շնորհեց պատկերասփիլոի «Հորիզոն» կայանին եւ Ազգ. Առաջնորդարանի «Եկեղեցին Հայկական» կիրակնօրեայ յայտագիրին: Այս վերջինին կարելի է հետեւիլ Կիրակի, 15 Յունիսի առաւոտեան ժամը 9-ին, «Հորիզոն» կայանին:

PRELATE RETURNS FROM ANTELIAS

H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and members of the Cilician Brotherhood serving within the Prelacy returned from Antelias where they had participated in the meeting of the Cilician Brotherhood from June 5th to the 7th, as well as in the blessing of Holy Muron.

Upon his return, the Prelate was interviewed by Horizon Television during which he conveyed details about his visit. He was also interviewed for the Prelacy's weekly television program, which will air on Sunday, June 15, at 9:00 a.m. on Horizon TV.

ԵԿԵՂԵՑԻՆ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ ԱՌԻԹՈՎ ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՉԱՆԸ ՊԻՏԻ ՊԱՏԱՐԱԳԷ ԼԱՍ ՎԵԿԱՍԻ ՄԵԶ

Լաս Վեկասի Հայց. Առաքելական Եկեղեցին այս շաբաթավերջին պիտի տուն իր հիմնադրութեան երկրորդ տարեդարձը:

Այս առիթով, Առաջնորդ Սրբազանը Կիրակի օր պիտի այցելէ Լաս Վեկաս, յետմիջօրէի ժամը 3-ին Ս. Պատարագ պիտի մատուցան Լուտերական Եկեղեցւոյ մեջ եւ օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ հաւատացեալներուն: Առաջնորդ Սրբազանին պիտի

ընկերանայ Ազգ. Առաջնորդարանի քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Գերապ. S. Միւռոն Ծ. Վրդ. Ազնիկեան:

Նոյն օրը, Երեկոյեան, Առաջնորդ Սրբազանը քաղաքի հայ համայնքի գալակներուն հետ ըլլալու Երկրորդ առիթ մը պիտի ունենայ: Եկեղեցւոյ ծխական մարմինը տարեդարձին առիթով կազմակերպած է ճաշկերոյթ մը, որուն ընթացքին տեղի պիտի ունենայ մոմավառութիւն:

PRELATE TO CELEBRATE DIVINE LITURGY ON THE SECOND ANNIVERSARY OF THE LAS VEGAS PARISH

On Sunday, June 15th, the Armenian Apostolic Church of Las Vegas will celebrate the second anniversary of its establishment with Divine Liturgy and a banquet. On this occasion, H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, will visit the parish where he will celebrate Divine Liturgy and deliver the sermon on Sunday, June 15th, at the Lakes Lutheran Church at 3:00 p.m. The Prelate will be accompanied by Christian Education Co-Director Very Rev. Fr. Muron Aznikian.

In the evening, the Prelate will preside over the second anniversary banquet of the parish.

Ս. ՊԱՏԱՐԱԳ ԵՒ ԱՌԱՋԻՆ ՄԱՏԱՂՈՐՅՆԵՔ ԱՉԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՄԱՏՐԱՆ ՄԵԶ

Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ տօնացոյցին համաձայն, Շաբաթ, 14 Յունիսը տօնն է Հայաստան աշխարհի առաջին քրիստոնեայ թագաւորին ու թագուհիին՝ Ս. Տրդատ եւ Ս. Աշխենի, որ միաժամանակ անուանակոչութեան տօնն է Ազգ. Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխեն» մատրան:

Հանդիսապետութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Սրբազան Յօր, Շաբաթ 14 Յունիսին Երեկոյեան ժամը 7-ին, Ս. Պատարագ պիտի մատուցուի եւ այս առիթով առաջին անգամ ըլլալով մատաղօրինեք պիտի կատարուի Ազգ. Առաջնորդարանի «Ս. Տրդատ եւ Ս. Աշխեն» մատրան մեջ:

Պիտի պատարագէ Կլենտէյի Ս. Աստուածածին Եկեղեցւոյ հոգեւոր հովիւներէն՝ Արք. S. Արտակ Քիևյ. Տեմիրճեան. օրուան խորհուրդը ներկայացնող պատգամ մը պիտի փոխանցէ Առաջնորդ Սրբազան Յայրը:

Ս. Պատարագի Երգեցողութիւնը պիտի կատարեն Թեմիս Երիտասարդաց խմբակներու անդամ-անդամուհիները:

DIVINE LITURGY AND BLESSING OF MADAGH AT THE ST. DERTAD AND ST. ASHKHEN CHAPEL

On Saturday, June 14th, the Feast of St. Dertad and St. Ashkhen, which is also the name day of the Prelacy Chapel, will be celebrated with Divine Liturgy at the “St. Dertad and St. Ashkhen” Chapel at 7:00 p.m. On this joyous occasion, there will also be the blessing of *madagh* for the first time at the Chapel.

The Prelate will preside over the Liturgy, which will be celebrated by Rev. Fr. Ardag Demirjian of St. Mary’s Church in Glendale, and will deliver the sermon.

Members of the Prelacy youth choir will participate in the Liturgy as well.

ԴԱՒԹԵԱՆ-ՄԱՐԻԱՄԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ԾՐՁԱՆԱՒՐՏՆԵՐՈՒ ՀԱՆԴԵՍ

Չարքաթ, 14 Յունիսին, տեղի պիտի ունենայ Դաւթեան-Մարիամեան Կրթական հաստատութեան հայերեն ծրագրի շրջանաւարտներու յատուկ հանդիսութիւնը, Կլենտելի Pacific Community Center-ին մէջ:

Յանուն Առաջնորդ Սրբազնան Յօր, Յոզէ. S. Պարթեւ Վորդ. Կիւլիւմեան եւ Վրժ. S. Նարեկ Զինյ. Փեղիվանեան Ներկայ պիտի ըլլան ձեռնարկին ու պիտի փոխանցեն Առաջնորդ Սրբազնանին օրինութեան եւ շնորհաւորութեան խօսքը:

DAVIDIAN AND MARIAMIAN EDUCATIONAL FOUNDATION GRADUATION CEREMONY

The graduation ceremony for students of the Davidian and Mariamian Educational Foundation’s Armenian program will take place on the evening of Saturday, June 14th, at Pacific Community Center in Glendale.

Very Rev. Fr. Barthev Gulumian and Rev. Fr. Nareg Pehlivanian will attend and convey the Prelate’s blessings and congratulatory remarks.

ԱՌԱՋՆՈՐԴ ՍՐԲԱՅԱՆԸ ԿԸ ՃՆՈՐՅԱՒՈՐԵ ՎԵՐԸՆՏՐԵԱԼ ՄԱՅՔԸ ԱՆԹՈՆՈՎԻԶԸ

Առաջնորդ Սրբազնանը, յանուն Թեմիս Կրօնական Ժողովին, Ազգային Վարչութեան եւ անձնապես, շնորհաւորական նամակ մը յղեց Լու Անճելըս գաւառի 5րդ շրջանի Վերակացու Մայքը Անթոնովիչին, իր պաշտօնին Վերընտրութեան առիթով:

Մայքրու Անթոնովիչ հայ գաղութի լաւ բարեկամներէն է եւ Յայ Դատի աշխատանքները քաջալերողներէն:

PRELATE CONGRATULATES SUPERVISOR MICHAEL ANTONOVICH ON HIS RE-ELECTION

On behalf of the Prelacy Religious and Executive Councils, the Prelate sent a letter to Los Angeles County 5th District Supervisor Michael Antonovich, congratulating him on his re-election.

In his congratulatory letter, the Prelate commended Supervisor Antonovich for his decades-long service to the community, and especially for his friendship and support of the Armenian community and the Armenian Cause.